


ԹՂԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴԻԱՄ
ՎԵՐԵԼՈՒ ՀԱՍՏԷ
M. BENIARD.
 22, Ormiston Road,
 Shepherd's Bush.
 London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի մի-
 ջնդուն, ժողովրդի կառնով եւ
 ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհա-
 նուրի հաւատարմաւէս քարո-
 կեցիկ կեանք — դա՛ է ծշմարտ
 ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՍՏԱՐ
 ՏԱՐԵԿԱՆ 5 ֆր.
 ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 "
 ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . 1 1/2 "


Ժողովուրդ, դու ինքդ մի-
 այն կարող ես ծնող բերել քո
 ազատութիւնը:

Արեւան քահանայներ — ահա
 ազատութեան ծանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր,
 այլ պահանջիր եւ ծնող բեր:

ԵՐԿՐՈՐԴԱՐԱՆԱԿԱՆ—ԲԱՂԱԲԱԿԱՆ ՀԱՆԴԻՄ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ ԼՕՆԴՕՆ Nr 11. ՄԱՐՏ. Nr 11. 1896 ՄԻ ԱՄՍԵԱՅ



1900-Ի ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԵԱԸ.

Քսաներորդ դարու սկիզբը Բարիզի
 մէջ կատարուելիք տնտեսական աշխարհա-
 հանդէսին «քաղաքակրթութիւն» բաժնին
 մէջ ի տես պիտի դրուին վերջացող 19-դ
 դարու քաղաքակրթական յառաջդիմու-
 թեանց հրաշալիքները: Այժմ մեծ պետու-
 թիւնք համաձայնած են այդ բաժնի մաս-
 նաւոր կերպով ձօնացնելու՝ դարավերջի
 փայլուն անցքերու յիշատակարաններով:
 Պատուոյ տեղը վերապահուած է Օսմանեան
 պետութեան համար, որը ի ցոյց պիտի
 դնէ խաղաղասիրական եւ քաղաքակրթական
 բարձր եւ վսեմ նպատակաւ՝ վեց մեծ պե-
 տութեանց հաճութեամբ՝ իւր կողմէ գոր-
 ծադրուած կոտորածներու, աւարառու-
 թեանց, բռնաբարութեանց եւ հրդեհներու
 ճշգրիտ պատկերներ, կենդանի նկարներ,
 մանրամասն տեղեկագիրներ, զոհերու եւ
 վնասներու ծիշդ թիւը ներկայացնող վե-
 ճակագիրներ, որոնք եւրոպական դեսպան-
 ներու ալ ստորագրութիւնը պիտի կրեն:
 Ընդհա, այս բաժնին համար, այժմէն
 նուիրած է թիւերից՝ չորս Վապոյտ
 Տեւրակներ, ի մօտոյ դեռ ուրիշներ նուի-
 րելու խոստումով: Սօլզլորի Մարքիսն
 ալ՝ իւր կողմէ փութացեր է աղնուաբար
 նուիրել իւր նշանաւոր ծառերը... Արեւ-
 սենք թէ երկրորդ տեղը Ռուսիոյ տրուած
 է՝ նոյն քաղաքակրթական սուրբ նպատ-
 կով՝ Բալթիկի ափէն, Ռուս յեղափո-
 խականներու դէմ եւ Հրէից դէմ այդ պե-
 տութեան կողմէ ի գործ դրուած արդար
 եւ քրիստոնէական հալածանաց յիշատա-
 կարաններու եւ նմոյշներու ցուցադրութեան
 համար:

Արժանահաւատ աղբիւրէ կիսմանսը
 նաեւ հետեւեալ լուրերը:

Ռուսիա բուռն կերպով բողբոքած է
 քաղաքակրթական բաժնի մէջ առաջնա-
 կարգ տեղը իրեն չը տրուելուն համար, ի
 մէջ բերելով այն փաստը թէ՛ իւր քա-
 ղաքակրթիչ դերը այդչափով չը վերջանար,
 այլ ինք մեծ բաժնի ունի նաեւ Հայաս-

տանի մէջ տեղի ունեցած փառաւոր անց-
 քերուն նախագիծերը պատրաստելու եւ ա-
 նոց գործադրութիւնը քաջալերելու նա-
 խանձելի գործին մէջ եւ թէ՛ դարավերջի
 համար ինք դեռ այնպիսի անակնկալներ
 պատրաստած է որ թուրքիոյ տարեգրու-
 թեանց այս վերջին ամենափայլուն էջերն
 ալ պիտի գերազանցեն: Սակայն թուրքիա
 չուզելով հրաժարիլ մեծ պետութեանց
 կողմէ իրեն տրուած առաջնութեան պա-
 տիւէն, Վերմանիա եւ Ֆրանսա իրաւա-
 րարի դեր ստանձնելով՝ խորհուրդ տուած
 են երկու պետութեան՝ երեք տարի ալ
 մրցիլ իրարու հետ, որով յետոյ իրենցմէ
 որը որ գերազանցէ եւ միւս պետութեանց
 գնահատութեան եւ ծափահարութեան ար-
 ժանանայ, աշխարհահանդէսին ցուցադրու-
 թեան մէջ պատուոյ տեղը իրեն պիտի
 տրուի: Հատեր այժմէն կը պնդեն թէ յաղ-
 թութիւնը Ռուսիոյ կողմը պիտի մնայ:
 Արեւ պետութիւնը ալ իրենց քաղաքա-
 կրթական մրցման ասպարէզ ընտրած
 են... Հայաստանը:



ՀԱՅՈՒՆ ԲԱՂԿԸ.

Թրմիած Հայք զարթոցաւ,
 Ելաւ քաջի ալէս ոտքի.
 Բայց մարդասէս Եւրոպան
 Ձուգեց որ հայն ազատուի:

Թօթուեց շղթայն ամբակուռ
 Բազմադարեան ցտորուկը.
 Սակայն Եւրոպ մընաց լուռ,
 Ձուգեց որ հայն ազատուի:

Հայն ալ ուզեց մարդկորէն
 Ապրիւս դառնալ տէր քաղաքի,
 Այլ բըռնակալն անօրէն
 Ձուգեց որ հայն ազատուի:

Բըռնութեան կուռքն ալ դըժիւմ,
 Որուն անուն Ձար կոչուի,
 Մեր սուրբ դատին կեցաւ դէմ,
 Ձուգեց որ հայն ազատուի:

Աշխարհակուռ այն ոտիւ,
 Հայու արեան ծարաւի՝
 Ըզմեզ ըրաւ ոտնակոխ,
 Ձուգեց որ հայն ազատուի:

Սատուն, Պօլիս, ամէն տեղ
 Վազեց արեան մեր հեղեղ,
 Դեռ վեց հըգօր պետութիւնք
 Ձուգնն որ հայն ազատուի:

Հայաստանն է սպանդանոց
 Եւ Կիւիկիան ալ դժոխք,

Դեռ իրաւանց այն դըրժողք
 Ձուգնն որ հայն ազատուի:

Լեռինք քարինք ողբացին
 Հայոց քաղաք եղկելի,
 Սակայն իշխողք չուզեցին
 Որ ցտորուկ հայն ազատուի:

Ելաւ Ձէյթուն քաջարի
 Եւ կըռուեցաւ յաղթական,
 Վեց Պետութիւնք մէջ մըտան՝
 Որպէս զի հայն չազատուի:

Արեւմանեղ մահիկը
 Յաղթեց Խաշին — որ պաշտուի.
 Խաշին Կուռքը չամբըջաւ,
 Ձուգեց որ հայն ազատուի:

Մի Քրիստոնէայ «վնասիւս»
 Մարդակօշօշ հետ ճաճկի
 Դաշինք կըռեց անպատկառ՝
 Որպէս զի հայն չազատուի:

Հայ արեան մէջ լողալով
 Մեր դահիճն արդ կը հորժուի,
 Եւ կը գոչէ անվերջով՝
 «Կոտորենք որ չազատուի»:

Բայց այն ցտորուկն անարգաւած
 Առիժ դարձած անվրջաւտ՝
 Կը մըռնչէ երկանց մէջ՝
 «Պէտք է լինի հայն ազատ»:

Անգնի Դահիճ, դու գիտցիր,
 Հայը մընայ անվրկանդ.
 Թէպէտ տաս ջարդ, կոտորած,
 Պէտք է լինի հայն ազատ:

Թէ քանտ, երկաթ, կառավարատ
 Սպանաւս, հայեր հարազատ
 Ձըլան երեք յուսահատ
 Միշտ է լինի հայն ազատ:

Դիւանագէտք անամօթ՝
 Որ անարգէք մեր զանգատ,
 Ձեր աշք քննոյ մնայ կարօտ,
 Յորչափ չըլայ հայն ազատ:

Դիշերէ մինչ յառաւօտ՝
 Ձեր հաշիւներ ցնդին յօռ,
 Բայց կը յաղթէ արդար դատ,
 Եւ կը լինի հայն ազատ:

Հայ ազգն ունի մի նպատակ,
 Մէկ ուխտ, մէկ յոյս, մէկ հաւատ.
 Կամ ամէնքուս նահատակ՝
 Կամ կը լինի հայն ազատ:

Ողորմութիւն եւ կամ զուժ
 Մի՛նք այլ եւս չենք ըսպաներ.
 Վըրէժ, կըռիւ — այլ եւ սէր, —
 Եւ կը լինի հայն ազատ:

Մեր սուրբ արեան մենք ի լիժ
 Բըռնութիւնը կը խեղդենք.
 Թէպէտ ջարդես մեզ, Դահիճ,
 Մենք մեր արեամբ կը յաղթենք:

Եւ դու գոռոգ բըռնակալ՝
 Որ թագդ դեռ չը կապած՝
 Մեր արեան մէջ թաթխեցիր,
 Մեր արտասուօք լըւացիր:

Թող անիծուի՛ քո անունդ՝
 Յորչափ սուրք եւ իրաւունք,
 Յորչափ արեւ լինի վկայ
 Թըռուառութեանց՝ երկրի վրայ:
 ԴԱՋՄ.



Ի ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ.

Պոսթոն. 15 մարտ.

Պոսթոնի հայն ալ իր պարտականութիւնը խղճմտօրէն կատարեց «Արծիւներու բոյնի» համար — ինչպէս որ հիմա հոս մենք ալ հը պարտօրէն կ'անուանենք ԶԵՅԹՈՒՆԻ:

Ուշիոյ բարձրերը սուղացող գնդակները պահ մը մոռցնել տուին ամէն կուսակցութիւն, ու միանուագ ներդաշնակութեամբ «եղբայր ենք մենք» գոչելով եկան միասին հաւաքուցան վարդապետն ու մատնիչը, առտուածաբանն ու ստախօսը, քարոզիչն ու խառնակիչը, բանաստեղծն ու տիրացուն, նկարիչն ու վաճառականը, իշխանազունն ու յօգուածագիրը, բժիշկն ու լեզուագէտը, վերջապէս ամէն հասակի, ամէն կարգի, ամէն գոյնի մարդիկ: Զաւելով պէտք է ըսենք որ եղբայրասիրական այս նուագահանդէսին մէջ միայն չնչականները փայլեցան իրենց... բացակայութեամբը:

Այդ սրտաշարժ գումարումին մասնակցող բոլոր ականաւոր անձերը խորհեցան, խօսեցան, վիճեցին, չափեցին, ձեւեցին, ծրագրեցին ու վճռեցին ԶԵՅԹՈՒՆԻ նպատակը երեկոյթ մը տալ:

Իսկ ու ըրին: Հատ փառաւոր տոմսակներ տպագրեցին, ոսկեգոծ. հրաւիրեցին պոսթոնական գեղեցիկ սեւեռն պատկանող նաւելագոյն տիկիներն ու ամէնէն շնորհալի օրիորդները, պատրաստեցին ճաշեր երգեր և ծափահարողներ, գնեցին մեծաբանակ պաղպաղակ, օշորակ, նարինջ, յիմն, խնձոր, պաննա և բազմատեսակ ոգեւոր ըմպելիքներ ոգևորուելու համար:

Վերջապէս հասաւ ցանկալի ժամը ու սրահը լեցուցաւ երկսեռ բազմութեամբ: Ամբողջ երեք ժամ պար, երգ ծափերու ընկե-

րակցութեամբ: Ամէնքն յուզուեցան, յուզեցին. կերան, ծիծաղեցան ու «կեցցէ» ի բաժակները պարպեցին ԶԵՅԹՈՒՆԻ համար: Օ՛հ սրտաշարժ հանգէս. շատ փափուկ շրթներ արտասանեցին մեր քաջարի մարտիկներու անունները, այդ առթիւ օտարուհի շատ գողտրիկ աչքեր յառեցան հայկական համբաւաւոր քիթերու վրայ ու սրտերը տրոփեցին հայկական ձայներէն ուրոց մէջ ԶԵՅԹՈՒՆԻ շնորհուն արծաթադները կը կարծէին լսել:

Ու կը թռչէին ժամերը. գիշերը սահեցաւ անցաւ ծիծաղիտ երազի մը պէս: Եւ այդ ամէն ժպիտներէն, այդ ամէն հրապոյրներէն մնաց միայն թափուր սրահ մը, շատ մը նարինջի, պաննայի կեղեւներ և մի քանի բրգանման դէզեր ալտոտ ամաններու և պատուաքաղներու, պատերազմի դաշտին վրայ մնացած վերաւորներու և մեռածներու նման, և այդ ամէնէն սոսկալին... երեկոյթին հաշիւը:

Ու տեսնուեցաւ որ, շնորհիւ այն ժրջանութեան զոր ցոյց տուին հանդիսականներուն ստամոքսները, և այն հրաշալի եղանակին որով վերացան, աներևութացան կարգ մը տոմսակներ, երեկոյթին հաշուաւորը եղաւ 25 տոլար... բաց:

Նշտարբեր աչքով գիտեցին մեր բարեկամները այս պակասորդը:

— Վաճառականութեան հաշուատետրերուն մէջ, ըսին, «շահ և վէճ» — ի գլուխը միենայն է: Երեկոյթը որով համար էր, — ԶԵՅԹՈՒՆԻ. ո՞վ պիտի գանձէր հասոյթը. — ԶԵՅԹՈՒՆԻ. ուրեմն պարզ է որ կրկնատոմարի օրէնքով մնասն ալ ԶԵՅԹՈՒՆԻ հաշուին կ'անցնի:

Իսկ այս կորովի տրամաբանութեան վրայ կ'ընկնելով 25 տոլարի փոխանակագիր մը քաշեցին ԶԵՅԹՈՒՆԻներուն վրայ:

Տարակոյս չունինք որ մեր լեռնի հերոսները իրենց ծանօթ պարտաճանաչութեամբ պիտի վճարեն այդ պարտքերին:

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒՆԻՐ ՏԻԿԻՆ. Մ. Ն. . . ԻՆ.

(Հարունակութիւն) 1)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

XIII

Վիւհահարած ծառան շփոթված իսկոյն ներս վազեց... Մինը միւսի ետեւից սկսան ներս սուղալ սուղութանի բաշիքողուգ պաշտօնեաները:

Վառն շէմբի վրայ իր գիշերային հագուստով երևեցաւ Հաջի-Աղան. նա բառասուն տարեկանի մօտ մի տղամարդ էր. հակառակ իր անընդհատ ծայրայեղ աշխատութեան՝ նա վերջին ծայր գիրուկ էր. նրա ամբողջ կզակի տակ նշմարվում էին պատանեկութեան յիշատակ վարդապոյն այտերի թարմ հետքերը. նրա կէս կապոյտ աչքերն արտայայտում էին պարզութիւն և անկեղծութիւն: Գեոտած ծառայից լսելով թիւը պաշտօնեաների այսքան կանուխ ներկայութիւնը՝ նա գունաթափվեց, նրա գլուխը պտտվեց. բռնութիւնը ներս էր մտել իր շէմբից, մի բռնութիւն, որի գլուխը նոյն ինքը սուղութան է: Ինչ անել՝ պէտք էր համակերպել: Հաջի-Աղան ճակատագրի և նախախնամութեան միանգամայն հաւատացող մարդ էր. այդ հաւատը քաջայերեց նրան: Ուշաբերվելով, նա աշխատեցաւ իր դէմքից կարելի եղածին չափ այլալուծութիւնը հեռացնել և այսպէս մերձայաբար դուրս վազեց ընդունելու նախախնամութեան այս անտանելի պատուհասը. ստրկութիւնը դիմաւորում էր անարգ բռնակալութեան... Միւթասարքի Նազըմը տեսնելով նրան շուարած դրութեան մէջ, ցաւակցական դէմքով մօտեցաւ նրան, բարեկեց և թիւրքական

կեղծ քաղաքավարութեամբ նախ պարզեց իր այսքան կանուխ գալուն նպատակը, յետոյ սկսաւ ներողութիւն խնդրել նրանից, որ անկամայ անհաստատութիւն էր պատճառում նրան:

— Ինչ կարող ենք անել, Հաջի-Աղա, սուտ էր նա, Բարձրագոյն Գունից հրաման է եկել. մի քանի ստահակ սրիկաների արարքները մեր քաղաքի պատիւն էլ կոտրեցին: Մենք չենք կարող զանց առնել Կենտրոնից եկած հրամանները, որի պատասխանատուութեան ինչ աստիճան ծանր լինելը դուք լուս գիտէք: Այս ասելով, նա մի գրօշմված թուղթ հանեց իր գրպանների մէկից և ներկայացրեց Հաջի-Աղային: Իսկապէս դա կեղծ խաբարված մի հրամանագիր էր:

Հաջի Աղան ուշադրութիւն էլ չը դարձրեց այդ թղթի վրայ. նա մտածում էր. նրա ուշը գրավել էր բոլորովին տարբեր բաներով: Նա իր առջև մարմնացած էր տեսնում թիւրք նենգամտութիւնն ու շողորթութիւնը: Եթէ Նազըմը բացարձակ կերպով հայհոյէր նրա երեսին, այնքան էլ ծանր չէր լինի, որքան նրա շինծու քաղաքավարական ձեւերը և նրա ասածները, որոնց իւրաքանչիւր բառը կ'աթմածի նման իջնում էր նրա սրտի վրայ և պաղցնում արիւնը:

— Իսկ Բէկ-Էֆէնդի, կ'մկաց Հաջի-Աղան, յիշելով իր ընտանեկան ներկայ վիճակը...

— Հոգ չէ, վնաս չունի, հասկանում եմ ձեր ասածները, հօ օտարականներ չենք, թէքիֆ չունինք, ասաց Նազըմը խորամանկ ժպիտը երեսին... և իր ստորաբաւ պաշտօնեաներով առանց «համեցէք» դիմեց ներս:

Հաջի-Աղան խելքից գնում էր: Սուղութեան կան անամութիւնն ու լիտիութիւնն անպատուում էին նրա ընտանեկան յարկը, որի տակ այդ ժամանակ բոլորովին անտեղեակ դուրսը տեղի ունեցած անցուդարձից ամենքը խաղաղ քրնած էին իրանց առաւօտեան ամենաքաղաք

ՆՈՐ ԸՅՈՒՐ ԶԵՅԹՈՒՆԻՆ.

ԿԻՆԿԻԱ ԵՒ ՀԱՊԵՇԵՍԱՆ.

Հայ յեղափոխական «խոշոր» մարմին մը ըսելով որ ԶԵՅԹՈՒՆԻ և Ուշիոյ քաջերը ապստամբած են Հնչակեան դրօշի տակ, անմիջապէս կը փութայ առաքելներ ուղարկել այդ կողմերը, շարժան մասնակցելու կամ, աւելի ձիշդը, անոր փառքը Հնչակեաններէն խելով ազգասիրական նպատակով: Այդ առաքելները երկու փոքրիկ խումբերու կը բաժնուին որոնցմէ մին ԶԵՅԹՈՒՆԻ պիտի երթար, իսկ միւսը Ուշիոյ (այդ խոշոր մարմինը) բաժ աշխարհագրական նոր գիւտին համաձայն, պէտք է գիտնալ թէ ԶԵՅԹՈՒՆԻ և Ուշիոյ առանձին առանձին տեղեր են...):

ԶԵՅԹՈՒՆԻ երթալիք խումբը ճամբայ իյնալով և ճամբայ-չի գիտնալով — որովհետեւ առաջին անգամն էր որ Կիլիկիա կերթար — ծովով ու ցամաքով կերթայ, կերթայ և վերջապէս կը հասնի... Հապէշիստան: Մենքիքը, զոր մեր պարոնները ԶԵՅԹՈՒՆԻ ՄԷԼԻՔԸ կը կարծեն, լաւ ընդունելութիւն կընէ այս անկոչ հիւրերուն և գնահատելով անոնց ռազմագիտական ճարտարութիւնը, զանոնք իր բանակներուն սպայակոյտի անդամ կը կարգէ. ձիշդ այն օրերն էր որ տեղի կունենար Աստուրի հռչակաւոր ճակատամարտը որուն մէջ Խաւաքիք — ըստ մեր պարոններուն թուրքերը — չարաչար յաղթուեցան. տարակոյս չկայ որ այս նոր ԶԵՅԹՈՒՆԻները (Հապէշներն) իրենց յաղթանակը կը պարտին մեր տաղանդաւոր և ազգասէր հայ յեղափոխականներուն... Երկրորդ խումբն ալ որ ուղղակի Ուշիոյ պիտի երթար, կղզիի մը մէջ երկար մանակ դեգերելէ վերջ, տեսնելով որ ոմանք կը պնդեն թէ Ուշիոյ և ԶԵՅԹՈՒՆԻ միենայն տեղն են, և իմանալով թէ իրենց ընկերները Հապէշիստանի ճամբով գացած են ԶԵՅԹՈՒՆԻ, կորոշեն իրենք ալ երթալ նոյն ճամբով. բայց իրենց ճանապարհի ծախքը պակաս գալով, այդ

1) Տես «Ապտակի» առաջին տարի Nrs 7 — 12 եւ երկրորդ տարի Nrs 1 — 10.



O miei sudditi, lasciate ogni speranza.

Մանկ
Բեկեր
Փարէս

Եւրոպական դարավերջի փառաբանութեան նրբացած չաշակը :

{ Ճաշերոյթ ի պատիւ ռուսական արջին
Բաղիումն շփանդանների

կողմի իտալական բանակին համար փոխադրուող ջորիներուն կընկերանան ի հաշիւ իտալական կառավարութեան: Մենեյիքը իմանալով որ այս կերպով իտալական բանակին մէջ ալ մուտ գտած են «հայ յեղափոխականներ», կը սարսափի և անմիջապէս հաշտութիւն կառաւարկէ իտալացիներուն:

Ո՛հ, երջանիկ է Հայաստան
Որուն այսպէ՛: գործիչք կան,
Որոնք կերթան Հապէշիստան
Եւ կը դառնան... ջորեպան:

ԻԱՅԹՈՅ.

ՅՈՒՇԻԿ ԵՐԹԱՍ, ՀԵՌՈՒՆ ԵՐԹԱՍ.

«Յեղափոխական» անունը կողմ մի խումբի անդամներու մէջ:—

—Եղբայր, այս Հնչակեանները ամէն կողմ մուտ գտած կը գործեն. մենք երբ պիտի ըսկընք գործելու:

—Համբերող եղբր, եղբայր, յուշիկ երթաս, հեռուն երթաս, կըսէ առածը... ահա մեր «մինչև անկախութեան» հաշիւը: Եւ ի՞նչ է իմ փոքրիկ խումբը: Երբ որ արդէն պատրաստ ենք ըսենք հինգ տարիէ ի վեր, այս օրերս ճանապարհ ինկան դէպի Հայաստանի սահմանագիւղեր: Երբ որ արդէն անտարակոյս Հայաստան կը հասնին յիսուն տարիէն և 500 տարիէն ալ սաղ սէլիմ կը հասնին Կիւրիկա:

ԿԱՐԻՃ

ԹՈՒՐԿԱԿԱՆ ՅԱՌԱՊԱՆՈՒԹՅԱՆ.

Տաճիկ բարձր պաշտօնատար մը խօսելով Տաճկաստանի վերջին զինուորական պատրաստութեանց և արուեստական յառաջդիմութեան վրայ, հետեւեալ կերպով խօսած է:

—Սուլթանը չուզելով ալ ևս թշնամի կեանք ունենալ փամիուշտ գնելու հարկին մէջ գտնուիլ, թօփխանէի մէջ կը բանեցնէ քսան

ճառ բաց անել նրան. գոռում էր, լուտանքներ էր դուրս տալիս և սպառնական ձևեր էր առնում: Կինն անգրգռելի էր մնացել...

—Այ գեամուր բաժ, գոռաց յանկարծ, Կէրի-Խուրշիդը, մէկ ուժգին աքացի խփելով նրա կրծքին. կինը կիսաշունչ ընկաւ ոստիկանների ոտքի առջև: Մտուկը ճրճուաց, կողպանքի լեզուակը տեղի տվեց դաշոյնի սուր ծայրին, երևան եկան կանացի շորեր իրանց տեսանելի լինելով... Կինը նուազած էր: Մի քանի ոստիկաններ նրա ծամերից բռնելով բաշքըցին և դուրս տարան...

Անբարոյականացած պաշտօնեաներն իրար գլուխ էին փաթաթում կանացի շորերը և կատակներ անում: Հոհում, ծիծաղում էին այն հրէշաւոր քահանայներով, որոնց լսելը զրուանք, վերաւորանք է ազդում մարդու ականջին: Կրօնք դուրս էին չլսողութեան խօսքեր, լուտանքներ, անարգանքներ, որը միայն և միայն յատուկ է անարգ սուլթանի ստորաքառ պաշտօնեաներին և որոնք յիշեցնում են վայրագ ենիզըրիների վայրենութիւնները:

Մին իր պանտալոնի գրպաները լցնում էր նուշի շաքարներով, մէկ ուրիշն անուշով լիքը մի պնակ էր լակում. նրա բեխերի մագերէն իրար էին փակում և նա կովի պէս լիզում էր նրանց և մաքրում... Մերթ ծաղրում էր եւրօպական ձևերը և կոշտ զմեռի ծայրով մի քիչ առնելով անուշից նազանքով համեցէ էր առնում իր մօտի ընկերին, իսկ այս վերջինս կոտորաւորելով մերժում էր: Մէկ ուրիշը ձեռք ձգելով մաթիթայով լիքը մի շիշ, կոնծում էր Հալի-Աղայի կենսօրը:

—Մի մատ էլ ինձ թող, Հասան, պողտում էր Ֆախրին, նրա ետեւից վազելով, միաժամանակ ագահութեամբ բերանը կոխելով իր ձեռքն ունեցած մի քանի կարկանդակների կրտսերները:

—Սա բիւէզնիքը շատ լաւ կը սաղի իմ գեղեցիկ Հանիֆէի փափուկ ձեռքերին: Հապա սա գէրտանլըգը, բարձր տարով նրա ջէրանի նը-

հազար գործաւորներ, որոնք անգուշ աշխատելով, շնորհիւ վեհափառ Սուլթանին, օրական տասներկու հազար փամիուշտ կը պատրաստեն...

ԱՆ, ԵԹԵ ԶԵՅԹՈՒՆ ԴԻՍԱՆԱՐ...

Հայ «յեղափոխական»ներ.

—Այն, եթէ Զէյթուն քիչ մ'ալ դիմանար, հոն պիտի երթային մեր գունդերը և անպատճառ Կիւրիկան կազատուէր:

Հայ հարուստներ.

—Այն, եթէ Զէյթուն քիչ մ'ալ դիմանար, յօժարակամ պիտի նուիրէինք մեր առատ նըպաստները, որպէս զի Հայերն յաղթող հանգիստային մինչև վերջը:

Հայ թերահաւատներ.

—Այն, եթէ Զէյթուն քիչ մ'ալ դիմանար, մենք ալ ևս կատարեալ հաւաք պիտի ունենայինք Հնչակեան Կուսակցութեան վրայ և պիտի երթայինք կուրիկ ու մեռնիլ իւր գրօշին տակ:

Իսկ հիմա...

—Իսկ հիմա մենք նոյնն ենք ինչ որ էինք երէկ:

—Մենք ալ, կը պատասխանէ Հնչակեանը, նոյնն ենք ինչ որ էինք երէկ, վաղն ալ նոյնը պիտի ըլլանք ինչ որ ենք այսօր — և միշտ... ձեզ ամենքդ արհամարհող:

Շ.

ԶԵՅԹՈՒՆԻ ԿՈՒՈՒԻ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ.

Հայ վարիչներէն մին կը խրախուսէր Զէյթունցիները, բոլոր ձայնով.

—Քաջ, քաջ, աղաղակելով.

Թուրք զօրքերը որոնք յաջող կը կուռէին այդ միջոցին, կարծելով թէ իրենց զօրապետն է որ «գաչ, գաչ» (փախիւր, փախիւր) կը

ման վզից, հաւատացնում եմ ձեզ, ես խելքիցս դուրս կը գամ, ասաց Խուրշիդը, մի զոյգ ոսկի ապարանջան և թանկագին մարգարիտներ խոշոր մի շարոց էլ վերցնելով և իր գրպաններից մէկում անհետացնել աշխատելով:

—Նա բառասուն գեամուր քաժի արժէքն ունի, յարեց նա. նա այսօր ինձ կը վարձատրէ և իր փափուկ գէրգանից ինձ կը տայ ամենաբազմը մի շէֆալու (շէֆալ, որ փոխաբերաբար նշանակում է համբոյր)... Մենք կը փաթաթվենք չէրքէզ հիւրիս հետ ամենազբմ սիրով...

Գրացի սենեակում ուրիշ ոստիկաններ Էֆէ-Օսմանի և Սէրիսօշ-Խալիդի օգնութեամբ բաց էին արել ուրիշ սնտուկներ: Կրանցից իւրաքանչիւրն իր ձեռքում բռնած ունէր մի մի թանկագին զարդ և ինքնաբաւական դէմքով նայում էր նրա վրայ: Մէկ անկիւնում երկու պաշտօնեաներ բարձրաձայն վիճում էին, մինչև անգամ նրանք սպառնալիքներ էին կարդում միմեանց. նրանք չէին կարողանում իրանց մէջ բաժանել մի մետաքսեայ ընտիր սաւան. մինը մի ծայրից, միւսը միւս ծայրից բռնած քաշքշում էին, մինչև որ նուրբ գործվածքը շոշաւաց և երկու կտորի բաժանվելով, մնաց քաղաքի պաշտօնական աւազակների ձեռքը:

Մէկ ուրիշ սենեակում բազմոցի կակուղ մինդէրների վրայ ծաղապատիկ նստել էր Բէկ-Էֆէնդի Նազըմը: Սենեակի տախտակամածի վրայ անկանոն կերպով դիզել էին նամակների, թղթերի և այլ և այլ մեծութեամբ հաշուետուութիւնների մի մեծ կոյտ: Հալի-Աղան գունամափ նստել էր իր ծնկերի վրայ. երկու ոստիկան զինուոր հրացանը ձեռքերին, սպառնական դիրքով կանգնել էին աջ ու ձախ կողմերը:

—Հաւատացնում եմ ձեզ, Բէկ-Էֆէնդի, ասում էր Հալի-Աղան գողգող ձայնով, թէ սրանք վաճառականական նամակներ են, հաշուի տուարներ են, նրանց մէջ կան և կարեւոր մուր-

պուայ, յանկարծ լեղապատառ կը սկսին փախչիլ: «ԱՊՏԱՅ»-ի Թիի 1 ՀԱՆՆԱԿԱՆ ԼՈՒՆԱԿԱՆ ԼՈՒՆԱԿԱՆ.

Ար կարծէինք թէ ոչ ոք կարող պիտի ըլլար մեր հանելուկը լուծել. սակայն կերակր թէ անոր ենթական, ֆրանսացիներու ըսածին պէս, բօլիշին էլի դաղունիքն է եղել:

Աշխարհիս ամէն կողմէն լուծումներ Խեղացին, մանաւանդ Ամերիկայէն, մանաւանդ Ամերիկայէն, և ամէնքն ալ դժբաղդաբար... ճիշդ:

Այս անսպասելի արդիւնքին առջև պահ մը շուարած մնացինք:

Լուծողներէն կէսը կարծէր են թէ «Ապտակ»-ին տարեկանը պիտի ստանան... Եթէ մեր խոստումը այս իմաստով ըմբռնուի, զայն երականացնելու անկարող պիտի գտնուինք. վաստի զի «Ապտակ»-ը այն ժամանակ պիտի մնայ անսակ, անանկանալով հաղարաւոր թերթեր ձրի տալուն պատճառաւ:

Իսկ եթէ բուն իսկ մեր ըմբռնումին համեմատ երական ապտակը շնորհէնք, նորէն գրգռողութիւն. ան ստեն ալ մեր ափ-տակը պիտի մաշի:

Բայց որովհետեւ մեր բարեկամները համաձայն են յայտնուել մեզ գտնելով հանելուկին ենթական, անտարակոյս անոնք արժանացած են ապտակ տալու և ոչ թէ ստանալու. ուստի անոնց ափ-տակներն ալ մերինն հետ միացնելով աւելի ուժգին կերպով կուտանք անոնց որ հարկ է:

Շնորհակալ ենք աջակցութեան համար:

ՀԱՆՆԱԿԱՆ ԹԻԻ 2

Գտնել մ'արտիքոս դառնալու դիւրին միջոցը: (Սոյն հանելուկը լուծողը պիտի արժանանայ մարտիրոս անուան):

ԼՕՆԴՕՆ. 7 ՀՆՉԱԿԻ՝ ՏՊԱՐԱՆ.

Հակներ. եթէ ձեր մեծութիւնը հաճի, թող մնան այստեղ: Աղաչում եմ ձեզ, Բէկ-Էֆէնդի մեր բարեկամական սիրոյ համար. մի քիչ հաւատք ընծայեցէք իմ խօսքերին. պատուոյ խօսք եմ տալիս ձեզ, որ նրանց մէջ մի վնասակար բան անգամ չը կայ:

—Իմանում եմ, Հալի-Աղա, պատասխանում էր Նազըմը, իր վրէժխնդրութեամբ լեցուն աչքերը յառելով նրա վրայ. ցաւում եմ, շատ ցաւում եմ ձեր ներկայ վիճակին, բայց ցաւելով էլ յայտարարում եմ ձեզ, որ ուրիշ կերպ չեմ կարող կարգադրել: Ես ըստիպված եմ այդ թուղթերը տանել կառավարական գրասենեակը՝ հակառակ պարագային մեծ, շատ մեծ պատիժ է սպառնում ինձ. հօ դուք էլ լաւ էք իմանում պօլիտիքայի խնդիրների պատասխանատուութեան ծանրութիւնը: Այսօր դուք հիւր կը լինէք մեզ մօտ, մենք միատեղ կը ջոկենք նրան. դուք ձեր ներկայութեամբ պատիւ կը բերէք մեր պաշտօնական յարկին:

Հալի-Աղան շանթահար եղաւ. նրա լեզուի կապերը թուլացան, աչքերը մթաքնեցան. նա իրան կարծում էր վայրենիների աշխարհում. մարդակեր բարբարոսները ողջ-ողջ պղտկում էին նրա միւսը. քրտինքը հեղեղի նման հոսում էր նրա ճակատից: Նրա աչքին պատկերանում էին հրէշներ, ճիւղներ, որոնք իրանց ոսկրոտ ու չորացած ձեռքերով խեղդում էին նրան. նա ինքն իրան կարծում էր երազական աշխարհում. լայն բաց էր անում իր աչքերը և ստիպել իրականութիւնը տեսնում էր կանգնած իր դիմաց. ուզում էր պոռալ, օգնութիւն կանչել... բայց որին, որը դէմ: Իր առջև կանգնած էր Երզրէղի մանկաւիկի, սուլթանի անարգ պաշտօնեան, որ անարգում, անպատուում էր նրան:

(Կը շարունակվի) Վ.ԻԹ.